600.0279.31.07.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

31 հուլիսի 2019 թվականի №279Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 30-Ի №318Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) 2019 թվականի հուլիսի 11-ին «ԷԼԻՍ ՀԷԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով 2 տարի 6 ամսով երկարաձգել Հանձնաժողովի 2014 թվականի հուլիսի 30-ի №318Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված «Էլիս» փոքր հիդրոէլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0553 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը,

բ) համաձայն Ընկերության տարբեր տարիների գրություններով ներկայացված տեղեկատվության՝ «Էլիս» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման համար 2011 թվականից մինչ օրս իրականացվել են միայն Կայանի նախագծման և հողային աշխատանքներ,

գ) Ընկերությունը 3-րդ անգամ է կառուցման ժամանակահատվածի երկարաձգման հայտ ներկայացնում Հանձնաժողով,

դ) «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝

1) 5-րդ հոդվածի 1-ին կետի «ե» ենթակետի համաձայն՝ էներգետիկայի բնագավառում պետական քաղաքականության հիմնական սկզբունքներից է տեղական էներգետիկական պաշարների, էներգիայի վերականգնվող աղբյուրների արդյունավետ օգտագործումը և դրան ուղղված տնտեսական ու իրավական մեխանիզմների կիրառումը,

2) 35-րդ հոդվածի համաձայն՝ էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիաները տրվում են՝ հաշվի առնելով տեղական պաշարների արդյունավետ օգտագործման անհրաժեշտությունը,

ե) «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հանրային ծառայությունների ոլորտում կարգավորման նպատակներից է կարգավորող մարմնի կողմից օրենքներով սահմանված իր իրավունքների և պարտականությունների իրականացմամբ ռեսուրսների արդյունավետ օգտագործման խթանումը,

զ) Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի 81-րդ կետի համաձայն՝ էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը երկարաձգվում է նախկինում սահմանված կառուցման ժամանակահատվածից ոչ ավելի՝ հաշվի առնելով լիցենզավորված անձի, ինչպես նաև Հանձնաժողովի աշխատակազմի կողմից հիմնավորվող ժամկետը,

է) ԼԷ №0553 լիցենզիայով ամրագրված «Էլիս» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը հայցվող 2 տարի 6 ամսվա փոխարեն նպատակահարմար է երկարաձգել 2 տարի 4 ամսով, քանի որ դեռևս 2011 թվականի օգոստոսից՝ «Էլիս» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման №0418 լիցենզիայի տրամադրման պահից մինչ օրս, շուրջ 8 տարի, կայանի կառուցման ուղղությամբ կատարվել են միայն կայանի նախագծման և հողային աշխատանքներ (ինչը փաստվում է Ընկերության կողմից տարբեր տարիներին Հանձնաժողով ներկայացված տեղեկանքներով), ինչի արդյունքում, ըստ էության, խախտվում է համապատասխան բնական ռեսուրսի արդյունավետ օգտագործման պահանջը (ընդ որում նույն մոտեցումը ներկայումս կիրառվում է բոլոր լիցենզավորված անձանց նկատմամբ), և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը, այդ թվում՝ կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետը, Հանձնաժողովը **որոշում է.**

1. երկու տարի չորս ամսով երկարաձգել Հանձնաժողովի 2014 թվականի հուլիսի 30-ի «ԷԼԻՍ ՀԷԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Էլիս» փոքր

հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №318Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0553 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը՝ որոշման մեջ «մինչև 2019 թվականի օգոստոսի 3-ը» բառերը փոխարինելով «մինչև 2021 թվականի դեկտեմբերի 3-ը» բառերով:

2. Ընկերությանը՝ ԼԷ №0553 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով «Էլիս» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝

   1) մեկամսյա ժամկետում «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության 2017 թվականի մարտի 20-ի №1193/08 գրությամբ Հանձնաժողով ներկայացված բանկային երաշխիքի համաձայն երաշխավորված 15,780,000 (տասնհինգ միլիոն յոթ հարյուր ութսուն հազար) դրամ գումարից 7,890,000 (յոթ միլիոն ութ հարյուր իննսուն հազար) դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.

   2) քառասունհինգօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 15,780,000 (տասնհինգ միլիոն յոթ հարյուր ութսուն հազար) դրամ գումարի երաշխիք՝ առնվազն մինչև 2022 թվականի հունվարի 17-ը գործողության ժամկետով:

3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի օգոստոսի 3-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք.Երևան
31 հուլիսի 2019թ.